ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

18 հունիսի 2026թ. թիվ 653

Վ.ՂԱՐՍԱՅԱՆԻՆ ԵՎ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ
ՕՁՈՒՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերով և հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանի 2026 թվականի հունիսի 18-ի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ն ւ մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ Վահրամ Ղարսայանին և ավագ մասնագետ Աշոտ Նալբանդյանին ս/թ հունիսի 18-ին մեկ օրով գործուղել Ալավերդի համայնքի Օձուն բնակավայր՝ մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները դիտարկելու համար:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Աիդա Շիրինյանին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գործուղման ծախսերի հաշվարկումը և վճարումը:

3. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ Վահրամ Ղարսայանին և ավագ մասնագետ Աշոտ Նալբանդյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո հնգօրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

Invalid signature

X

ԱԻԴԱ ՇԻՐԻՆՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Signed by: SHIRINYAN AIDA 5301740180 Ա.ՇԻՐԻՆՅԱՆ

2026թ. հունիսի 18
ք.Վանաձոր